Մանվել Զուլալյան

Հայաստանը թուրք-իրանական պատերազմների ժամանակաշրջանում[1]

Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև 1512 թ. բռնկվեց մի պատերազմ, որը կարճատև ընդհատումներով շարունակվեց մինչև 1639 թ.: Հայ ժողովուրդն իր ուսերի վրա տարավ այդ ռազմական բախումների ամբողջ ծանրությունը՝ կրելով անլուր տառապանքներ, քանզի Հայաստանի տարածքը դարձել էր երկու պետությունների ռազմական բախումների հիմնական թատերաբեմը: Այդ պատերազմի գլխավոր պատճառներն էին Հայկական լեռնաշխարհի ռազմավարական նշանակությունը, առևտրական ուղիների զավթման նկրտումները, այսրկովկասյան երկրները կողոպտելու ձգտումը և, վերջին հաշվով, քաղաքական իշխանության հաստատումն այդ երկրամասում:

Դեռևս 15 դ. վերջին Սեֆյան պետության հիմնադիր շահ Իսմայիլը, կործանարար հարվածներ հասցնելով ակ-կոյունլուների՝ հոգեվարքի մեջ գտնվող պետության վերջին ներկայացուցիչներին՝ Ֆարրուխ Յասարին ու Ալվանդին, 1501թ. գրավեց Թավրիզը և իրեն հռչակեց նոր պետության շահնշահ: Սեֆյան պետության ստեղծման ժամանակաշրջանը հայկական աղբյուրներում բնութագրվում է որպես «վրդովման» և «ալեկոծման» շրջան:

Շահ Իսմայիլը 1502-1507 թթ. գրավում է պատմական Հայաստանի մեծագույն մասը և, կոտրելով քուրդ բեգերի դիմադրությունը, իրեն է ենթարկում նրանց փաստական տիրապետության տակ գտնվող Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանները: Դատելով հայկական աղբյուրների վկայություններից՝ շահ Իսմայիլի ռազմական գործողությունները հայ բնակչության համար ունեցել են աղետալի հետևանքներ: Աղթամարի հայոց կաթողիկոս Գրիգորիս Աղթամարցին կարճ ու պատկերավոր է ներկայացրել Հայաստանի վիճակը տվյալ ժամանակաշրջանում՝ գրելով, որ «Հագարացիք օրինօք թիւր// Զազգս խանձեն որպէս զհուր»[2]:

Թուրքերի ու Սեֆյանների հարաբերությունները ծայրաստիճան սրվեցին սուլթան Սելիմ Յավուզի (1512-1520 թթ.) իշխանության տարիներին: Նա 1514 թ. Երզնկա- Դերջան- Էրզրում-Երևան-Չալդրան ճանապարհով արշավեց Իրան: Շահ Իսմայիլը, հետևելով Աքեմենյան Իրանի տիրակալների ռազմավարությանը, խուսափում էր ճակատամարտից՝ միաժամանակ կարգադրելով թուրքական արշավանքի ճանապարհին ընկած շրջաններում ամեն ինչ ոչնչացնել ու այրել՝ դրանք վերածելով անապատի: Ալպյան մարգագետիններով հարուստ Հայաստանում թուրք զավթիչներն իրենց ձիերի համար չէին կարողանում նույնիսկ կանաչ խոտ ճարել: Ի վերջո՝ 1514թ. օգոստոսին, Խոյից ոչ հեռու՝ Չալդրանի դաշտում, տեղի ունեցավ մեծ ու արյունալի ճակատամարտ, որն ավարտվեց թուրքերի հաղթանակով: Դրանից հետո

---

[1] Հայոց պատմություն: Հատոր II, գիրք երկրորդ (IX դարի կես - XVII դարի առաջին կես): Միջին դարեր: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, էջ 597-606

[2] Տե՛ս Կոստանեանց Կ., Գրիգորիս Աղթամարցին և իւր տաղերը, Թիֆլիս, 1898, էջ 14:

թուրքերը մեկը մյուսի հետևից գրավեցին Արևմտյան Հայաստանի քաղաքներն ու գյուղերը։

Թուրքերը 1515 թ. գրավեցին ու իրենց ենթարկեցին նաև Կիլիկյան Հայաստանը։ 1515-1516 թթ. Օսմանյան կայսրության սահմանների մեջ ներգրավվեցին նաև քրդական շրջանները, ինչը խիստ բացասական հետևանք ունեցավ հայոց ճակատագրի վրա։ Արևմտյան Հայաստանում զորեղացավ քրդական տարրը, և հայ ժողովուրդն ընկավ կրկնակի՝ թուրք ու քուրդ ավատատերերի լծի տակ։ Նկատի ունենալով քուրդ բեգերի զինական ուժը՝ օսմանյան ղեկավար շրջաններն ամեն կերպ նպաստեցին նրանց վիճակի ամրապնդմանը ոչ միայն Հայաստանի հարավային, այլև հյուսիսային ու հյուսիսարևելյան շրջաններում։

Շահ Իսմայիլի և Սելիմ Ահեղի միջև 1515 թ. կնքվեց զինադադար, ըստ որի՝ Արևմտյան Հայաստանը՝ Էրզրումով հանդերձ, անցավ Օսմանյան կայսրության տիրապետության տակ։ Արևելյան Հայաստանն ու Ատրպատականը մնացին Սեֆյանների գերիշխանության ներքո։

Սակայն զինադադարը ժամանակավոր բնույթ էր կրում։ Արևելքի նոր տիրակալների՝ Սուլեյման Կանունիի (1520-1566 թթ.) և շահ Թահմասպի (1524-1576 թթ.) միջև հաշտության պայմանագիր չէր կնքվել։ Երկու կողմերն էլ առիթ էին փնտրում վերսկսելու ռազմական գործողությունները։

Հակամարտող պետությունների միջև ռազմական ընդհարումների վերսկսման անմիջական առիթը հետևյալն էր. 1530-ական թթ. Բիթլիսի քուրդ տիրակալ Շարաֆ խանը, դժգոհ թուրքական իշխանություններից, ապստամբեց և անցավ շահ Թահմասպի կողմը։ Ատրպատականի կառավարիչ Ուլամեն, իր հերթին դավաճանելով շահին, ապաստանեց թուրքերի մոտ։ Սուլթանը Շարաֆ խանի փոխարեն նրան նշանակեց Բիթլիսի ու դրա շրջակայքի կառավարիչ։ Ուլամեն, թուրքական 50 հազարանոց հեծյալների գլուխ անցած, պաշարեց Բիթլիսը, սակայն Շարաֆ խանը նրան ուժեղ դիմադրեց՝ միաժամանակ շահից հայցելով օգնություն։ Ակնարկելով այդ դեպքերը՝ Առաքել գրիչը հայտնում է, որ «Էրեկ Ուլամայ» սուլթանն ի վերայ Բաղիշա բերդին և խսարեաց և բազում աւերք արար երկրի մերում»[3]։

Ուլամեն շուտով պաշարեց Վանի բերդը։ Սուլթանը Վան ուղարկեց 90 հազարանոց բանակ՝ մեծ վեզիր Իբրահիմ փաշայի գլխավորությամբ։ Մեկը մյուսի հետևից թուրքերը գրավեցին Արծկեն (Ադիլջևազը), Արճեշը, Խլաթն ու Վանը, և իրանական կզլբաշների (կարմրագդակների) բանակը ստիպված նահանջեց։ Զավթելով Թավրիզը՝ թուրքերն այնտեղ կառավարիչ նշանակեցին Ուլամեին։ Օգտվելով այն հանգամանքից, որ թուրքական բանակը շարժվել էր դեպի Բաղդադ՝ շահ Թահմասպը հարձակվեց Ուլամեի վրա։ Վերջինս փախավ Վան, իսկ իրանական զորամասերը, հետապնդելով նրան, կատարյալ աղետի մատնեցին ամբողջ Վասպուրականը։ Եվ պատահական չէ, որ այս դեպքերը հայոց պատմության մեջ մտել են որպես «Վանի աղետ»։ Այս իրադարձությունները մանրամասն նկարագրված են հայերեն մի շարք ձեռագրերի հիշատակարաններում և Հովհաննես Արճիշեցու

[3] ՄՄ, ձեռ. թիվ 5665, թ. 201բ։

տարեգրության մեջ, ուր մասնավորապես ասվում է, որ իրանական հեծյալ զորամասերը «ցուրեալ ի չորս դիմաց աւերեցին և անմարդաբնակ արարին. զՎանայ երկիրն, զՈստանայ և զԱմկուն»[4] և «թէ քանի մարդ մեռաւ սրով և թրով, թօփով և թուանկով, սովով և ծարաւով, ահիւ և դողալով, ի սուրբ Սարգսի պահոցէն մինչև ի Համբարձումն»[5], այսինքն՝ 1534 թ. հունվարի երկրորդ կեսից մինչև մայիսի 3-ը՝ Համբարձման տոնը։

Թուրքական բանակի նոր արշավանքը վերջ տվեց Վանի պաշարմանը։ Թողնելով Վանը՝ շահ Թահմասպը շտապեց Իրան։ Սակայն, օգտվելով թուրքերի նահանջից, շահը ևս մի անգամ շարժվեց դեպի Վան ու առանց դիմադրության գրավեց այն։

Այսպիսով՝ 1531-1535 թթ. ռազմական բախումների ընթացքում թուրքերին չհաջողվեց իրանական բանակին շոշափելի հարված հասցնել։ Բացառությամբ Բարձր Հայքի (Դերջան, Էրզրում և այլն)՝ ամբողջ Արևմտյան Հայաստանը, փաստորեն, շարունակում էր մնալ Սեֆյանների ձեռքում։

1548թ. ռազմական գործողությունները վերսկսվեցին։ Սուլթան Սուլեյմանը, հսկայական բանակի գլուխ անցած, Սեբաստիա-Ամասիա-Էրզրում-Արծկե ճանապարհով շարժվեց Թավրիզ։ Իրանական բանակը կրկին խուսափեց մարտից։ Այս արշավանքը ևս ոչ պակաս աղետալի էր թուրքերի երթուղում գտնվող ու հարակից այլ շրջանների հայ բնակչության համար։ Կեղծելով իրականությունը՝ սուլթան Սուլեյմանը ֆրանսիական թագավոր Հենրիխ II-ին հղած նամակում հանդես է գալիս որպես քրիստոնյա հպատակների (հայերի) շահերի արտահայտիչ. «Այդ երկրի ռայաներն ու հպատակները, մեր Բարձր հովանավորության ներքո, արժանանալով թագավորական արդարության և աշխարհապարփակ ողորմության, զերծ մնացին կողոպուտից ու թալանից»[6]։ Մինչդեռ դեպքերի ականատես Ներսես Վարագեցին ճիշտ և ճիշտ հակառակն է վկայում։ Օսմանցիները, գրում է նա, «քակեցին առհասարակ զգիւղս և զքաղաքս», իսկ այնուհետև սուլթանը «հրամայեաց տանել եօթն բեռն կարմիր (ոսկի) ի Վան և պարսպել զքաղաքն. և սկսան ի շինելն, քակեցին զգերեզմանս՝ զխաչքար ազգապանաքարն և արկին ի հիմն պարսպին… Դարձեալ հրամայեաց մեծ արքայն՝ Հունքար յամենայն աշխարհաց՝ որք ընդ ձեռամբ իւր էին, ցորեան, գարի (ժողովել) և տանել ի Վան»[7]։

Արևմտյան Հայաստանից սուլթանական բանակի նահանջից հետո իրանական զորամասերը շարժվեցին Վանի, Բիթլիսի, Արճեշի ու Արծկեի ուղղությամբ՝ ճանապարհին ավերելով և ամայացնելով ամեն ինչ։ Այդ են վկայում ինչպես հայկական, այնպես էլ թուրքական աղբյուրները։ Հայաստանի տարածքում ավերիչ ռազմական գործողություններ տեղի ունեցան նաև հետագա տարիներին։ Թե ինչպիսի

---

[4] Տե՛ս Մանր ժամանակագրություններ. XIII- XVIII դդ., հ. II, էջ 229։

[5] Նույն տեղում, էջ 230։

[6] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, թարգմանություն թուրքական բնագրերից, ներածական ակնարկներով, ծանոթագրություններով և հավելվածով, հ. Բ, կազմեց Ա.Խ. Սաֆրաստյան, Երևան, 1964, էջ 204։

[7] ՄՄ, ձեռ. թիվ 6273, թ. 438-440։

ծանր հետևանքներ ունեցան շահ Թահմասպի արշավանքները, բացահայտում է Թադեոս Սեբաստացին։ Նա այդ մասին գրում է և ողբում[8]։ Արևմտյան Հայաստանում կատարված ավերածությունները համեմատելով Լենկ Թեմուրի ասպատակությունների հետ՝ Թադեոս Սեբաստացին նշում է. «Աղէտք գործոց վնասու սոցա առաւել են, քան զԼանկթամուրայն, զորս կարծեմ թե չիք տեսեալ ուրուք ի հողածնացս»[9]։

Ի պատասխան Արևմտյան Հայաստանում իրանական բանակի ավերիչ ասպատակության ՝ թուրքերը 1554 թ. ավերակի կույտի վերածեցին Արևելյան Հայաստանը։ Ըստ Իբրահիմ Փեչևու՝ «Հաղթական բանակի սարսափից քաղաքներն ու գյուղերը, տներն ու բնակավայրերն այն աստիճան էին ամայացել, որ տեսնողին սարսափ էին պատճառում»[10]։

Ի վերջո երկու պետությունների միջև կայացան երկարատև բանակցություններ, և 1555 թ. մայիսի 29-ին Ամասիայում հաշտության պայմանագիր կնքվեց։ Ըստ դրա՝ երկու պետությունների նախկին սահմանները գրեթե նույնությամբ վերականգնվեցին. Հարավային Հայաստանը(Վան, Մուշ, Բիթլիս և այլն) անցավ Օսմանյան կայսրությանը, իսկ Արևելյան Հայաստանը մնաց Իրանի տիրապետության տակ։

Ամասիայում կնքված հաշտության պայմանագիրը չէր ապահովում հարատև խաղաղություն երկու պետությունների միջև։ Դա, ավելի շուտ, կարճատև զինադադար էր, քանզի չէր վերացնում նրանց միջև գոյություն ունեցող, կրոնական շղարշի տակ թաքնված խոր քաղաքական հակասությունները։

Չնայած սուլթան Սուլեյմանի մահից հետո գահ բարձրացած Սելիմ II-ի (1524-1574 թթ.) ժամանակ Ամասիայի հաշտության պայմանագիրը 1566 թ. վերահաստատվեց, սակայն դա դարձյալ ժամանակավոր էր։

1571 թ. հոկտեմբերի 7-ին Լեպանտոյի ծովամարտում եվրոպական դաշինքի նավատորմից թուրքերի կրած ծանր պարտությունը նպաստավոր էր Իրանի համար, քանզի հնարավորություն էր տալիս խախտելու Ամասիայի պայմանագիրը և ներխուժելու օսմանյան պետության սահմաններ։ Սակայն 1576թ. ՝ շահ Թահմասպի մահից հետո, Իրանում ծայր առած գահակալական կռիվները վերին աստիճանի թուլացրին Սեֆյան Իրանը։ Դա թուրքերի համար հարմար առիթ էր վերսկսելու ռազմական գործողություններն Իրանի դեմ։

Օսմանյան բանակը Լալա Մուստաֆա փաշայի գլխավորությամբ 1578 թ. ներխուժեց Արևելյան Հայաստան։ Նույն թվականի օգոստոսի 10-ին Չլդրը լճի մոտ տեղի ունեցավ մեծ ու արյունալի ճակատամարտ, որն ավարտվեց թուրքերի հաղթանակով։ Օսմանյան այս արշավանքը նույնպես հայ բնակչության համար ունեցավ աղետալի հետևանքներ։ Դեպքերի ժամանակակից մի գրչի վկայությամբ՝ թուրքերը ռազմական գործողությունների ժամանակ «զբազում քաղաքս՝ և զգեղս՝ և

---

[8] Տե՛ս Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1902, էջ 593-595։

[9] Չամչեանց Մ., Պատմություն Հայոց, հ. Գ, էջ 514։

[10] “Tarihi-I Peçevi”, c. I, Istanbul, 1283 (1868), s. 313.

զգաւառս աւերեալ քանդեցին, զարսն սրով սպանին, և զկանայսն և զտղայսն գերի վարեցին, և այնչափ անողորմ բան արարին, զի տղայն՝ որ որովայնով կալան և ընկեցին ի վառեալ թօնիրն ի մէջ կրակին…: Եւ այլ բազում ազգի հնարս գործեցին, զի ոչ կարեմք լեզուաւ պատմել. և ոչ գաղետն ընդ գրով արկանել»[11]:

Օսմանյան բանակը 1580 թ. գարնանը շարժվեց դեպի Կարս և, հակառակ Ամասիայի հաշտության պայմանագրի, վերակառուցեց քաղաք-ամրոցը: Դրան զուգընթաց թուրքական բանակը Ջաֆեր փաշայի գլխավորությամբ ասպատակեց Արարատյան դաշտը: Այստեղ թուրքերին փոքրաթիվ զորաջոկատներով համառ դիմադրեց շահ Թահմասպի որդի Համզա Միրզան: Խոսելով Արարատյան դաշտում ծավալված ռազմական բախումների և Երևանի բնակչության, նախ և առաջ հայերի զանգվածային գերեվարության մասին՝ Իբրահիմ Փեչևին նշում է, որ գերիները հարց հարուցեցին, թե արդյոք խաղաղ բնակչության գերեվարումը օրինական է: Մուֆթի Քեմալ -փաշա զաղեն իր ֆեթվաներով (մեկնություններով) հաստատեց դրա օրինականությունը: Մուֆթին մինչև իսկ հայտարարեց, որ «… շարիաթով թույլատրվում է գերի վերցված կանանց հետ միասին գերի վերցնել նաև նրանց փոքրահասակ երեխաներին»[12]:

1582 թ. մեծ վեզիրի պաշտոնը ստանձնած Ֆերհադ փաշան 60 հազարանոց բանակով շարժվեց Երևան և ձեռնամուխ եղավ հին բերդի կողքին նորի (Կալա-ի ջեդիդ) կառուցմանը: Մեծ վեզիրի պաշտոնում Ֆերհադ փաշային 1584թ. փոխարինած Ուզդեմիր Օսման փաշան Էրզրումի և Երևանի վրայով շարժվեց դեպի Թավրիզ: Արշավանքի ճանապարհին թուրքական բանակն ամենուր ավեր էր սփռում ու զբաղվում կողոպուտով: Թավրիզի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Օսման փաշան սպանվեց, և թուրքական բանակը ստիպված նահանջեց Վասպուրական՝ ասպատակելով Վանն ու շրջակայքը[13]:

1585 թ.՝ շահ Խուդաբանդայի (1578-1587 թթ.) , մահից հետո, Իրանում ծայր առան գահակալական նոր կռիվներ, որից օգտվեցին թուրքերը և մինչև 1588թ. իրենց գերիշխանությանը ենթարկեցին ամբողջ Այսրկովկասը՝ իրանական Ատրպատականով հանդերձ:

Իրանի գահին 1587 թ. բազմեց երիտասարդ ու հեռատես քաղաքական գործիչ շահ Աբաս I-ը (1587-1629 թթ.): Հաշվի առնելով կենտրոնախույս ուժերի ապստամբությունների հետևանքով երկրում ստեղծված ծանր վիճակը՝ նա հաշտություն կնքելու խնդրանքով դիմեց թուրքերին: Կ. Պոլսում տեղի ունեցած երկար բանակցություններից հետո՝ 1590 թ. մարտի 21-ին, օսմանյան Թուրքիայի և Իրանի միջև կնքվեց նոր պայմանագիր, ըստ որի՝ թուրքական արյունոտ տիրապետության տակ ընկան ամբողջ Այսրկովկասը և Ատրպատականը՝ Թավրիզ կենտրոնով:

---

[11] ՄՄ., ձեռ. թիվ 6273, թ. 510-512:

[12] “Tarihi-I Peçevi”, c. I, s. 58-59.

[13] Տե՛ս ՄՄ, ձեռ. թիվ 8939, թ. 274ա-274բ:

Կ. Պոլսի պայմանագրով Օսմանյան կայսրությունը, զավթելով վերոնշյալ տարածքները, մասամբ լուծեց քաղաքական ու տնտեսական իր ծրագիրը։ Ավատատիրական մասնատվածությունից ուժասպառ Իրանը կրեց ռազմական ու բարոյական շոշափելի պարտություն։ Նվաճված ընդարձակ տարածքի հարստությունները բացահայտորեն սկսեցին կողոպտվել օսմանցի տիրակալների կողմից, իսկ բնակչությունը ենթարկվեց ծանր հարկատվության։ Հայ ավագանու տիրույթները կա՛մ հափշտակվեցին, կա՛մ նրանց պարտավորեցրին արքունական գանձարանին միանվագ խոշոր վճարումներ կատարել։ Այդ ամենը չէր կարող չառաջացնել հայ բնակչության համընդհանուր դժգոհությունը։

Իրանում շահ Աբասի իշխանության ամրապնդմանը զուգահեռ Օսմանյան կայսրության վիճակն աստիճանաբար վատթարանում էր։ Այնտեղ բռնկվեց հզոր ապստամբությունը[14], որը կաթվածահար արեց երկիրը։ Շահ Աբասն ուշիուշով հետևում էր Օսմանյան Թուրքիայում տեղի ունեցող բուռն իրադարձություններին։ Կ. Պոլսի 1590թ. պայմանագրով Այսրկովկասի կորուստն Իրանի ղեկավար շրջանները դիտում էին ժամանակավոր երևույթ՝ գտնելով, որ այդ երկրամասն իրենց ժառանգական «հայրենի աշխարհն է»[15]։ Նախքան օսմանցիների դեմ պատերազմ սկսելը Թուրքիայի դեմ միասնական ճակատ կազմելու համար շահ Աբասը դեսպանություններ է ուղարկում Մոսկվա, Գերմանիա, Վենետիկ, Տոսկանա և Հռոմի պապի մոտ։ Այս պայմաններում հայ և վրաց ավագանին օգնության հայցով դիմում է շահ Աբասին՝ նրան դիտելով որպես հույսի և ապավենի՝ իբրև «չարյաց փոքրագույնի»՝ թուրքական դաժան տիրապետության համեմատ։

Շահը պատերազմը վերսկսելու պատրվակ էր փնտրում, և այն շուտով ներկայացավ։ Օսմանցիների տիրապետությունից դժգոհ Սալմաստի բեգ քուրդ Ղազին ապստամբեց և դիմեց շահի օգնությանը՝ նրան հորդորելով շարժվել Թավրիզ։

Շահ Աբասը 1603թ. օգոստոսի 3-ին սրընթաց շարժվում է Թավրիզ ու գրավում այն։ Շուտով գրավվում է նաև Նախիջևանը, որին հաջորդում են Երևանի վեցամսյա պաշարումն ու գրավումը 1604թ. մայիսի 28-ին։

Երևանը պաշարած շահը 1604թ. ցուրտ ձմռան պայմաններում իր զորքերի գերագույն հրամանատար, ծագումով հայ Ալահվերդի խանին հրամայում է ասպատակել Արևմտյան Հայաստանի գավառները և տեղի բնակչությանը բռնի տեղափոխել Արարատյան դաշտ։

Իրանական զորքի առաջխաղացումը կասեցնելու և հակահարված տալու նպատակով սուլթան Ահմեդի հրամանով հսկայական բանակով Արևելք արշավեց մեծ վեզիր, ծագումով իտալացի Ջղալազադե օղլի Սինան փաշան։ Արշավանքի ընթացքում նրա խորամանկ ջանքերի շնորհիվ ջալալի ապստամբների մի շարք ղեկավարներ ավարառության սովոր իրենց զորքերով Էրզրումում միանում են օսմանյան բանակին։ Դեպի Երևան ճանապարհին ջալալիները «կողոպտէին,

---

[14] Ջալալիների շարժումների մասին տե՛ս Զուլալյան Մ. Կ., Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակն Օսմանյան կայսրության մեջ (XVI-XVII դարեր), Երևան, 1966։

[15] Առաքել Դավրիժեցի, էջ 68։

թալանէին, զոր ինչ գտանէին՝ յաւարի առնէին» և մարդկանց «դառն տանջանօք չարչարելով սպանէին եւ կամ վերս ի վերայ եդեալ թողուին կիսամահ եւ գնային»[16]:

Սա չարիքի սկիզբն էր միայն: Հաշվի առնելով Սինան փաշայի բանակի թվական գերակշռությունը՝ շահ Աբասը ստիպված եղավ նահանջել՝ հրամայելով տեղահանված ու Արարատյան դաշտում հավաքված հայ հոծ բնակչությանը բռնությամբ քշել Իրան: Այս հրեշային հրամանը շուտով ի կատար ածվեց: Շահի հետամտած նպատակն էր ամայի ու անմարդաբնակ դարձնել այն վայրերը, որոնցով պետք է անցներ օսմանյան բանակը, և որ գլխավորն է՝ տեղահանվող բնակչությունն ամեն կերպ պիտի նպաստեր բուն Իրանի տնտեսության ու առևտրի զարգացմանը:

Բռնագաղթի («մեծ սուրգունի») ենթարկված հայ բնակչության շարասյունը Առաքել Դավրիժեցու վկայությամբ ձգվում էր 30-40 կիլոմետր[17]:

Տասնյակ հազարավոր զոհերի գնով գաղթեցված զանգվածն անցավ Արաքսը: Նրանց կրած անլուր տառապանքների սովի, կամայականությունների, հայ կանանց ու աղջիկների լլկումների բազմաթիվ դեպքերի, իրանցի հրամանատարների վայրագությունների, ջրահեղձման դժնդակ պատկերների մասին մանրամասն վկայությունները շատ են: «Ինչպիսի՜ դժբախտությունների տեղի տվեց այդ ողբերգական տեղահանումը,- բացականչում է իտալացի դիվանագետ Պիետրո դելլա Վալլեն,- ինչպիսի՜ սպանությունների, ինչքա՜ն մարդիկ մահացան սովից, ինչպիսի՜ հափշտակումներ, աղջիկների ու կանանց բռնաբարումներ, ինչքա՜ն երեխաներ հուսահատության պատճառով խեղդվեցին կամ ջրախեղդ արվեցին իրենց հարազատ հայրերի աչքի առաջ, այլք սպանվեցին պարսիկ ղեկավարների կողմից կամ խլվեցին իրենց մոր կրծքից ու նետվեցին փողոցներն ու ճամփաները՝ դառնալու համար կենդանիների սնունդ, կամ տրորվեցին բանակի ձիրերի ու ուղտերի ոտքերի տակ մի ամբողջ օր: հայրերի՝ իրենց երեխաներից, ամուսինների՝ իրենց կանանցից, եղբայրների՝ իրենց քույրերից ինչպիսի՜ դժոխային բաժանում, որոնք ուղարկվեցին Պարսկաստանի հեռավոր նահանգները՝ հույս չունենալով այլևս իրար գտնելու: կազմվեցին տղամարդկանց ու կանանց ճամբարներ, որոնց զգալի մասը էժան գնով վաճառվեցին ինչպես անասուններ»[18]:

Տեղահանումը ոչ միայն մարդկային մեծ զոհեր պատճառեց, այլև ամայի դարձրեց Հայաստանի շատ գավառներ, մասնավորապես Արարատյան դաշտն ու Նախիջևանը, որը շահ Աբասի դեպի Հայաստան կատարած արշավանքի ժամանակ գրեթե բացառապես բնակեցված էր հայերով:

Գալով Արարատյան դաշտ և գտնելով երկիրն ամայի ու անմարդաբնակ՝ Սինան փաշան թուրքական բանակի ապստամբության պատճառով ստիպված նահանջեց Հայաստանի հարավային շրջաններ:

---

[16] Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, հրապարակեց Մեսրոպ վարդապետ Նշանեան, Երուսաղէմ, 1915, էջ 44 (այսուհետև՝ Գրիգոր Դարանաղցի):

[17] Տե՛ս Առաքել Դավրիժեցի, էջ 79:

[18] Voyage de Pie'tro della Valle', gentilhomme romain, dans la Turquie, I'Egypte, la Palestine, la Perse, les Indes orientales, & autres lieuxç t. III, Rouen, 1745, p. 398.

Ռազմական գործողությունները 1605 թ. վերսկսվում են։ Սինան փաշան օգոստոսին Դիարբեքիրից շարժվում է դեպի Սալմաստ ու Խոյ։ Ուրմիո լճի մոտ տեղի է ունենում մեծ ճակատամարտ, որն ավարտվում է օսմանցիների պարտությամբ։

Ռազմական գործողությունները և ջալալիների շարժումը Հայաստանում, սկզբում՝ արևմտյան, այնուհետև՝ արևելյան շրջաններում, պատճառ դարձան սովի ու համաճարակի, որոնք խլեցին տասնյակ հազարավոր մարդկանց կյանք։ Ջալալիների առաջին ասպատակությունները Եդեսիայի (Ուրֆայի) շրջակայքում էին՝ ոմն Կարա Յազըջիի գլխավորությամբ։ Նրանց առաջնորդ Կարա Յազըջին իրեն սուլթան էր հռչակել՝ Աբդուլ Հալիմ շահ անունով[19]։ Ուրֆայից Կարա Յազըջին հարձակվում է Սեբաստիայի վրա, սպանում շուրջ 25 հազար մարդ և «… ութ հարիւր անմեղ տղայս ի հայոց և ի հոռոմոց գերի վարեաց և յետոյ զքաղաքն ամենայն հրով այրեաց…»[20]։

1602 թ. փետրվարին՝ Կարա Յազըրջիի մահից հետո, ջալալիների շարժումն ավելի մեծ ծավալ է ստանում՝ ընդգրկելով Փոքր Ասիայի համարյա բոլոր շրջանները։ Գրիգոր Դարանաղցու խոսքերով՝ «… ջալալիքն զաշխարհն Անատոլեայ ծածկեալ էին որպես զձիւն»[21]։ Նույն թվականին հայահոծ Թոխաթը պաշարվում է Կարա Յազըրջիի եղբայր Դելի Հասանի կողմից։ Ջալալիները ծաղկուն ու վաճառաշահ այդ քաղաքը ավերակների վերածեցին։ Այդ մասին Ստեփանոս Թոխաթեցին թողել է սրտաճմլիկ մի ողբ[22]։

Ի վերջո Թուրքիայի ղեկավար շրջանները Դելի Հասանի հետ հաշվեհարդար են տեսնում, սակայն դրանից հետո էլ ջալալիների շարժումը շարունակվում է ու խիստ ընդարձակվում։ Ջալալիների ապստամբությունների մեջ ամենահուժկուները և ամենավտանգավորները Ջանփոլադ Ալիի և Կալենդար օղլիի գլխավորածներն էին։ Դրանք կատարյալ չարիք ու պատուհաս դարձան Փոքր Ասիայի և Հայաստանի մի շարք շրջանների բնակչության համար։ Ապստամբների թիվն այդ ժամանակ ավելի քան 200 հազար էր։

Ջալալիների ապստամբությունից տուժեց նաև Արևելյան Հայաստանի բնակչությունը։ Նրանք այստեղ առաջին անգամ պետք է մուտք գործած լինեին մեծ վեզիր Սինան փաշայի զորաբանակների հետ, թեև այդ ընթացքում ջալալիական մյուս խմբավորումները շարունակում էին ասպատակել Փոքր Ասիայի և Հայաստանի տարբեր մասերը։ «Ջալալիները,- գրում է Ազարիա Սասնեցին, - Հայաստանու հիմքն քակեալ// Միջև իսպառ զնա կործանեալ»[23]։

Թուրք- իրանական պատերազմներն ու ջալալիների շարժումները՝ մի կողմից, գյուղացիների զանգվածային փախուստն իրենց հողակտորներից՝ մյուս կողմից, հանգեցրին համատարած սովի, որը խլեց տասնյակ հազարավոր մարդկանց կյանք։ Բյուրավոր հայեր ստիպված հեռացան Հայաստանից՝ ապաստանելով օտար

---

[19] Առաքել Դավրիժեցի, էջ 475-476։

[20] ՄՄ, Մեսրոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյանի թղթպ. թիվ 30, էջ 91։

[21] ՄՄ, ձեռ. թիվ 2672, թ. 402բ։

[22] Տե՛ս նույն տեղում։

[23] Ազարիայի Սասնեցւոյ Ողբ ի վերայ հարուածոց արեւելեան գաւառացն եւ աշխարհին Հայոց ի ձեռաց Ճելալեանց, հրատարակեց Ն. Ակինեան, «Հանդէս ամսօրէայ», 1936, թիւ 7-9, էջ 324։

երկրներում։ Գաղթում էին դեպի Կ. Պոլիս, Թավրիզ, Սպահան, Թրակիա, Ղրիմ, Ռուսաստան, Լեհաստան և այլուր[24]։

1608 թ. վերջերին ջալալիների ապստամբությունը հիմնականում ճնշվում է մեծ վեզիր Կույուջի Մուրադի կողմից, որն էլ Էրզրում-Չալդրան-Խոյ-Սալմաստ ճանապարհով 1610 թ. գարնանը շարժվում է Թավրիզ։ Պատերազմող կողմերի միջև Սիրավում 1612 թ. նոյեմբերի 20-ին կնքվում է հաշտություն, որի հիմքում ընկած էր Ամասիայի 1555 թ. պայմանագիրը։ Այն նույնպես կրում էր ժամանակավոր բնույթ։ Օսմանյան բանակը, խախտելով պայմանագիրը, 1616 թ. գարնանը շարժվում է Կարս, իսկ այնտեղից՝ Երևան։ 55 օր տևած անհաջող պաշարումից հետո պարենային ու զինամթերային դժվարությունների պատճառով թուրքերը ստիպված դադարեցնում են Երևանի պաշարումը և Կարսի վրայով հետ քաշվում Էրզրում։ Թուրքերի այս արշավանքին իրանական կողմը պատասխանում է՝ Արևմտյան Հայաստանի գավառներ ասպատակիչ զորք ուղարկելով։

Թուրքերը 1618 թ. նոր մեծ արշավանք են կազմակերպում դեպի Իրան։ Ռազմական գործողությունները հայության համար դարձյալ ավերիչ հետևանքներ են ունենում։ Հայերեն մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «զՀայաստան երկիրս կոխան առնելով աւերեցին, զոր ոչ կարեմք զաւերումն ընդ գրով արկանել»[25]։ Շուտով երկու պետությունների միջև ռազմական գործողությունները տեղափոխվում են Միջագետք՝ Բաղդադի շրջակայք։

Բարձր Հայքի և Արևմտյան Հայաստանի հարակից շրջանների հայ բնակչությունը 1621-1629 թթ. մեծապես տուժում է Էրզրումի տիրակալ Աբազա փաշայի՝ կառավարության դեմ բարձրացրած ապստամբությունից։ Թուրք-իրանական սահմանագծում ընկած Էրզրումում թուրքերը պահում էին ենիչերական մշտական կայազոր, որը չարիք ու պատուհաս էր դարձել հատկապես տեղի հայ բնակչության համար։ Արազա փաշան կոտորել է տալիս Էրզրումի ենիչերական կայազորն ու ապստամբում։ Այդ պատճառով Բարձր Հայքն ու մերձակա նահանգները վերածվում են երկարատև ռազմական գործողությունների թատերաբեմի՝ հայ ժողովրդին պատճառելով անլուր տառապանքներ։

1635 թ. արևելյան երկու պետությունների միջև ռազմական գործողությունները դարձյալ տեղափոխվեցին Հայկական լեռնաշխարհ։ Այդ տարվա գարնանը սուլթան Մուրադ IV-ը (1623-1640 թթ.), հսկայական բանակի գլուխ անցած, Էրզրում-Կարս-Գյոկյումբեթ (Գեղանիստ) ճանապարհով արշավեց Երևան և պաշարեց քաղաքը։ Մեկ շաբաթ թուրքական հրետանին կրակ տեղաց՝ քանդելով քաղաքի կավե պարիսպները։ 1635 թ. օգոստոսի 8-ին Երևանի խան Թահմազկուլին բերդը ստիպված հանձնեց թուրքերին։

---

[24] Տե՛ս Առաքել Դավրիժեցի, էջ 109։

[25] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքումներու, հ. Ա., կազմեց Արտաւազդ արքեպ. Սիւրմեյան, Փարիզ, 1950, էջ 21։

Թուրքական բանակը Երևանից Մարանդի վրայով շարժվեց դեպի Թավրիզ, մտավ քաղաք ու հրկիզեց այն: Սակայն հաշվի առնելով, որ ձմեռը մոտենում է, թուրքական զորքը ստիպված նահանջում է Դիրաբեքիր:

Գահ բարձրացած շահ Աբասի թոռ շահ Սեֆին (1629-1642 թթ.), օգտվելով առիթից, 100 հազարանոց բանակի գլուխ անցած, պաշարում է Երևանը ու 1636 թ. մարտի 30-ին գրավում այն[26]:

Այնուհետև շահական զորքերը կրկին ասպատակում են Արևմտյան Հայաստանի գավառները. «Երբ թուրքական բանակը նահանջելուց հետո գտնվում էր Էրզրումում, լուր ստացվեց, որ պարսիկները պաշարել են Դիրաբեքիրի կամ Հին Միջագետքի սահմանում գտնվող ու անմատչելի մի վայրի վրա կառուցված, կարևորագույն քաղաք հանդիսացող Վանը: Քաղաքը պաշտպանվեց համառորեն, և պարսիկները չկարողացան տիրել նրան ո՛չ ուժով, ո՛չ էլ սովի միջոցով: Սակայն պաշարումը նրան թույլ տվեց ասպատակել ամբողջ երկրամասը և այն աստիճան ավերել, որ թուրքերը չկարողացան ո՛չ այստեղ ձմեռել և ո՛չ էլ սննդամթերք ձեռք բերել»[27]:

Այս ռազմական գործողություններից առավել տուժեց հայ խաղաղ բնակչությունը: «Եւ ի շարժմանէ այս երկուց ինքնակալ թագաւորաց,- գրում է Առաքել Դավրիժեցին,- աւերեալ ապականեցան աշխարհք՝ արևելք և արևմուտք և մանաւանդ աշխարհն Արարատու իւր շրջակայ գաւառօքն»[28]:

Ռազմական գործողությունների թատերաբեմը 1637-1638 թթ. դարձյալ տեղափոխվեց Միջագետք, և ի վերջո՝ 1638 թ. դեկտեմբերի 15-ին, թուրքերը գրավեցին Բաղդադը:

Բաղդադի պաշարման ժամանակ սուլթանի հրամանով Էրզրումի կառավարիչ Քենան փաշայի զորքերն ու օգնական թաթարական ուժերն ասպատակեցին Արարատյան նահանգը[29]:

Բաղդադի գրավումից հետո սուլթան Մուրադ IV-ը թեև նպատակադրվել էր շարունակել պատերազը, սակայն ընդհարումների ժամանակ թուրքական բանակի կրած նյութական ու մարդկային ծանր կորուստների պատճառով հրաժարվեց այդ մտքից: Ուստի և թուրքերն ընդունեցին թշնամու հաշտության առաջարկները:

Կասրե Շիրին կոչված վայրում 1639թ. մայիսի 17-ին օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև կնքվում է հաշտության պայմանագիր, որի հիմքում ընկած էին Ամասիայի 1555 թ. մայիսի 29-ի հաշտության պայմանները: Պատերազմից չարաչար տուժած հայ ժողովուրդը, բնականաբար, ուրախությամբ ընդունեց հաշտության լուրը: Անդրադառնալով հայ ժողովրդի համար թուրք-իրանական պատերազմների աղետալի հետևանքներին՝ Ժան Շարդենն արձանագրում է. «Աշխարհում չկա մի այլ երկիր, ուր տեղի ունեցած լինեին այդքան շատ արյունահեղ ընդհարումներ…նա

---

[26] Տե՛ս Առաքել Դավրիժեցի, էջ 260:

[27] Histoire des trois derniers empereurs des Turcs, depuis 1623 jusqu'a 1677, Traduite de I' anglaise par Sr. Ricaut, t. I, Paris, 1683, p. 115.

[28] Առաքել Դավրիժեցի, էջ 260:

[29] Տե՛ս Գրիգոր Դարանաղցի, էջ 578:

(Հայաստանը-խմբ.) հանդիսացավ ռազմական գործողությունների թատերաբեմ թուրքերի և պարսիկների մղած վերջին պատերազմներում։ Թուրքերը կռվում էին ամբողջ Հայաստանը նվաճելու համար, սակայն բավարարվեցին այն պարսիկների հետ բաժանելով. այդուհանդերձ, նրանք տիրեցին նրա մեծագույն մասին»[30]:

[30] Jean Chardin, Voyages du chevalier Chardin en Perse et autres lieux de I' Orient, t. II, Paris, 1811, p. 158.